Մրցույթ՝ «Երևանի Գալինա Ստարովոյտովայի անվան հ 177 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ), «Ռուսաց լեզու» (9 դասաժամ), «Իմ հայրենիքը» (9 դասաժամ), «Բնություն» (9 դասաժամ), «Անգլերեն» (6 դասաժամ), «Իմ հայրենիքը և աշխարհը» (9 դասաժամ), «Շախմատ» (16 դասաժամ), «Ֆիզիկա»(14 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ
- հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են **2025թ. նոյեմբերի 13-ից մինչև նոյեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 14:00-ը**, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից: Մրցույթը տեղի կունենա **2025թ. դեկտեմբերի 1-ին՝ ժամը 14:00-ին,** Երևանի Գալինա Ստարովոյտովայի անվան հ. 177 հիմնական դպրոցում: Հասցե՝ ք. Երևան, Ավան, Դուրյան թաղամաս, 3/24 շենք: Տեղեկությունների համար զանգահարել (010) 61-81-21 հեռախոսահամարներով: